Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ՝ Ք. ԴԱԼԻԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Վահան Մարտիրոսյան,

♦ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար,

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, քաղաք Դալիան,

2017 թվականի հունիսի 26-29-ը:

♦ ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Համաշխարհային տնտեսական ֆորումի ղեկավարող խորհուրդ:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Դալիան-2017» Համաշխարհային տնտեսական ֆորումին և նրա շրջանակներում կայացած «Նոր հաղթողներ 2017» խորագրով ամենամյա բարձրաստիճան հանդիպմանը:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

«Դալիան-2017» ֆորումի ընթացքում քննարկվել են Համաշխարհային տնտեսության տարբեր ոլորտների զարգացման միտումները, երկրների միջև հնարավոր համագործակցության եզրերը, տնտեսության զարգացմանը խոչընդոտող բացասական ազդեցությունները, դրանց նվազեցմանն ուղղված մրջոցառումները և անելիքները՝ նպատակ ունենալով դրական ուղի կառուցել տնտեսական աճի և զարգացման համար:

Միջոցառման ընթացքում քննարկվել է տնտեսության մեջ առանցքային նշանակություն ունեցող տեխնոլոգիաների աճի և կիրառման վրա արդյունաբերական ներդրումների, հանրային իրազեկման, նորարար քաղաքականության, կառավարության և բիզնեսի ազդեցությունը:

Քննարկվել է նաև զարգացվածության տարբեր մակարդակ ունեցող երկրներում տեխնոլոգիական անցումային շրջանները, դրանց համակարգային ազդեցությունը բիզնես մոդելների և արժեքի ստեղծման վրա:

Ֆորումի ընթացքում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման միտումները, առաջընթացն ու միջազգային ասպարեզում իր ուրույն դիրքը ունենալու հեռանկարները:

Գիտության, տեխնոլոգիաների և նորարարության թեմաներով անցկացվող կարևորագույն հավաքին, որին մասնակցել են 90 երկրների 2000-ից ավելի պատվիրակներ, քննարկվել է նաև Հայաստանի կողմից առաջարկվող ներդրումային և գործարար հնարավորությունները:

Համաշխարհային տնտեսության տարբեր ոլորտներում, այդ թվում նաև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործարար համագործակցության խթանմանն ուղղված միջոցառման ընթացքում քննարկվել է տարբեր երկրների հետ համատեղ ծրագրերի իրականացման և ՏՏ ոլորտի մասնագետների միջև համագործակցության հնարավորությունները:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Միջոցառման շրջանակներում հանդիպումներ են կայացել Համաշխարհային տնտեսական ֆորումի տարածաշրջանների և կառավարությունների գծով ղեկավար, խորհրդի անդամ Ֆիլիպ Ռոսլերի և Համաշխարհային տնտեսական համաժողովի Եվրասիայի տարածաշրջանի տնօրենի հետ:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել է Հայաստանում տեղի ունեցող բարեփոխումների օրակարգը, գործարար միջավայրի զարգացմանն ուղղված քայլերը, ինչպես նաև Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային օրակարգի մանրամասները:

Քննարկվել են երկկողմ հարաբերությունների ամրապնդմանն ուղղված անմիջական քայլերը և երկկողմ պատրաստակամություն հայտնել սերտացնել համագործակցությունը:

Քննարկվել է նաև Համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում Հայաստանում կայանալիք «Shape Eurasia 2017» միջոցառման կազմակերպման հարցը, որն ուղղված կլինի օտարերկրյա ներդրումների ներգրավմանը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործարար կապերի հաստատմանը: Միջոցառումը հիանալի

հարթակ կարող է ծառայել հայկական ընկերությունների համար միջազգային շուկայում իրենց կարողությունները ներկայացնելու և համատեղ ձեռնարկություններ հիմնելու նպատակով:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև պետական, մասնավոր և հանրային հատվածի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնց ընթացքում քննարկվել են գործընկերային հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

♦ **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Վահան Մարտիրոսյան

12.07.2017թ.